Ապահով համացանց 2015

Ծնողական ժողով

Թեմա- Ապահով համացանց

Նպատակը- Օգնել ծնողներին երեխանրի կողմից համացանցի ապահով և անվտանգ օգտագործման աջակցման հարցում

Խնդիրները

- ✓ Թեմայի կարևորության, արդիականության,
- ✓ համացանցի օգուտների և վնասների մասին ծնողներին ինֆորմացիայի տրամադրում:
- ✓ Մեդիա դաշտում ճիշտ կողմնորոշվելու մասին տեղեկույթի հաղորդում:

Ծնողական ժողովի պլան

1. Ներածական մաս- զեկույց **Ապահով լինենք համացանցում**
2. Կայքի ներկայացում http://safe.am/ar/parents.html , http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf
3. http://safe.am/ -ում տեղադրված տեսահոլովակների դիտում և քննարկում
4. Համացանցի անվտանգության հետ առընչվող իրավիճակների քննարկում, վերլուծում և խորհուրդներ ծնողներին, ամփոփում

Ծնողական ժողովի ընթացքը

1. Ներածական մաս- զեկույց

Ապահով լինենք համացանցում

Անհնարին է պատկերացնել արդի ժամանակաշրջանը առանց տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների: Հաշվի առնելով համացանցի գրեթե անսահման պաշարները, յուրաքանչյուր օր համալրվող ինֆորմացիայի ծավալը, չենք կարող անտեսել

նրա ազդեցությունը դպրոցականների աշխարհայացքի, որոշումների և վարքագծի ձևավորման վրա: Այդ ինֆորնացիոն դաշտը իր վրա է վերցրել մշակույթի փոխանցման և քաղաքակրթության զարգացման առյուծի բաժինը: Հետևաբար սովորողներին ինֆորմացիոն քաղաքակրթության պայմաններում ճիշտ կրթելու և դաստիարակելու գործում համացանցն ունի իր ուրույն տեղն ու դերը որպես ուսումնառության և ազատ ժամանցի կազմակերպման համապիտանի գործիք, տեղեկատվության աղբյուր ու հաղորդակցության հարմար միջավայր:

Ժամանակակից ինֆորմացիոն միջավայրը ամեն վայրկյան համալրվում է ինչպես օգտակար և համակարգված, այնպես էլ մեծ քանակով չհամակարգված և չճշգրտված ինֆորմացիայով: Անհրաժեշտ և օգտակար ինֆորմացիա փնտրելիս երեխան կարող է առընչվել ագրեսիա, տեռորիզմ, պոռնոգրաֆիա և այլ չվերահսկվող և անցանկալի կոնտենտ պարունակող կայքերի, ֆայլերի և նկարների:

Անիմաստ է հրաժարվել ինֆորմացիոն տեխնոլոգիաների բարիքներից, բայց երեխաների անվերահսկելի մուտքը համացանց կարող է հանգեցնել՝

- Երեխայի արժեքային համակարգի սխալ ձևավորմանը
- Երեխայի մտավոր, ֆիզիկական և հոգեկան ոչ նորմալ զարգացմանը
- Ինտերնետային կախվածության և դրանից բխող հետևանքների
- Համակարգչային սարքերի խափանմանը:

Շատ կարևոր և առաջատար է ծնողների դերը երեխաների զարգացման գործում: Ծնողների կողմից պետք է վերահսկվի երեխաների ազատ ժամանակի անցկացումը համակարգչի դիմաց: Իսկ դա հեշտ կլինի ստորև բերված մի քանի պարզ խորհուրդների հետևելով:

Համակարգիչը տանը տեղադրեք այնպիսի վայրում, որ ձեր համար ուշադրության կենտրոնում պահելը հարմար լինի: Ընկերացեք Ձեր երեխաների հետ, այնպիսի հարաբերություններ ստեղծեք, որ նրանք ազատ վստահելով ցույց տան Ձեզ իրենց ստացած հաղորդագրությունները: Զրուցեք նրանց հետ մեդիա դաշտում ճիշտ կողմնորոշվելու մասին: Սովորեցրեք երեխաներին պահպանել ինտերնետային էթիկայի կանոնները:

Համակարգչի վրա տեղադրեք հատուկ ծրագրեր, որը թույլ են տալիս սահմանափակել երեխաների հասանելիությունը դեպի անցանկանելի ռեսուրսներ, դեստրուկտիվ խաղեր, հակառակ դեպքում երեխայի մոտ կփոխվի ժամանակի ընկալումը, նա կարող է դառնալ գերագրեսիվ և հիպերակտիվ:

Ինտերնետային կախվածությունը նույնպես մեծ չարիք է դարձել մարդկության համար, սակայն ուշադրության դեպքում երեխայի վարքը մեզ կարող է հուշել դրա մասին՝

- ✓ Անընդհատ սոցիալական կայքերի, անձնական և էլ փոստը ստուգելու ցանկությունը
- ✓ Օնլայն ժամանակի ավելացումը
- ✓ Համակարգչի մոտ լավ ինքնազգացողությունը, իսկ համակարգչից հեռու գտնվելու ժամանակ դատարկությանը,դեպրեսիայի,լարվածության զգացողությունը
- ✓ Համակարգչից կտրվելու անընդունակությունը
- ✓ Աշխատանքի կամ ուսման հետ խնդիրների առաջացմանը
- ✓ Ձերքի մկանների գերլարվածության հետևանքով ցավ
- ✓ Չորություն աչքերում
- ✓ Միգրենանման գլխացավ
- ✓ Մեջքացավեր
- ✓ Անկանոն սնվել
- ✓ Քնի խանգարումներ

Այդ պատճառով պետք է ձեռնարկել քայլեր և կիրառել միջոցներ երեխաների արժեքային համակարգի ճիշտ ձևավորման և առողջության պահպանման համար:

Ծնողները պետք է զգոն լինեն նորագույն տեխնոլոգիաներից օգտվելու ընթացքում երեխաների ժամանակը վերահսկելու և սահմանափակելու գործում, որովհետև չափից ավելի տարվելն ինտերնետով կարող է վատ ազդեցություն ունենալ կյանքի կենցաղային, սոցիալական, աշխատանքային, ուսումնական, ֆինանսական, ընտանեկան և հոգեկա ոլորտների վրա:

Համացանցի ճիշտ օգտագործումը կնպաստի սովորողների ինքնուրույնության, պատասխանատվության ստեղծագործական և քննադատական մտածողության

զարգացմանը, արժեքային համակարգի ճիշտ ձևավորմանը: Համացանցից ճիշտ օգտվելու դեպքում կձևավորի երեխաների ինքնակրթության մշակույթը: Օժտելով սովորողին համացանցից ինքնուրույն գիտելիք ձեռք բերելու հմտությամբ, նրան հնարավորություն է ընձեռնվում այն օգտագործել տարբեր ոլորտներում և հարստացնել իր գիտելիքների պաշարը ողջ կյանքի ընթացքում:

2. http://safe.am/ Կայքի ռեսուրսներին ներկայացում

Ինֆորմացիայի հաղորդում կրթական կայքերի և ռեսուրսների մասին

http://safe.am/ar/parents.html Խորհուրդներ ծնողներին

http://safe.am/esafetykit/downloads/parentsFull.pdf Ծնողական ուղեցույց

http://safe.am/ilh/ilh.html Համացանցային գրագիտության ձեռնարկ

http://safe.am/esafetykit/downloads/kidsFull.pdf Սանձում ենք համացանցը

3.http://safe.am/ -ում տեղադրված տեսահոլովակների դիտում և քննարկում

https://www.youtube.com/watch?v=3iliubqyusQ

https://www.youtube.com/watch?v=xRJfV1_Num0

https://www.youtube.com/watch?v=KqgALYPSE8I

https://www.youtube.com/watch?v=RoOR17INguk

https://www.youtube.com/watch?v=SeAp9Fpfdsk

4.Ամփոփում-Համացանցի անվտանգության հետ առընչվող իրավիճակների քննարկում, վերլուծում և խորհուրդներ ծնողներին

V. Խորհուրդներ ծնողներին

- ✓ Բացատրեք երեխային ինչու չի կարելի իր և իր ծնողների մասին անձնական ինֆորմացիան տրամադրել անծանոթ օգտվողներին:
- ✓ Համակարգիչը տանը տեղադրեք այնպիսի վայրում, որ ձեր համար ուշադրության կենտրոնում պահելը հարմար լինի:
- ✓ Մի մեղադրեք երեխային տհաճ իրավիճակների համար ինտերնետում, այլապես նա կսկսի շատ բաներ ձեզանից թաքցնել:
- ✓ Բացատրեք երեխային ինչու է պետք զգույշ լինել էլեկտրոնային փոստով և սոցիալական ցանցերով անծանոթներին հաղորդագրություններ, ֆայլեր ուղարկելը:
- ✓ Պատմեք երեխաներին այն մասին, որ մարդիք էլ-փոստում և սոցիալական ցանցերում կարող են ներկայանալ այլ անունով, տարիքի և սեռի:
- ✓ Եթե անծանոթը առաջարկում է հանդիպել, անպայման պետք է տեղյակ պահեն ձեզ:
- ✓ Որոշակի ժամանակ անցկացրեք ինտերնետում երեխաի հետ:
- ✓ Ընկերացեք ձեր երեխաների հետ, այնպիսի հարաբերություններ ստեղծեք, որ նրանք ազատ վստահելով ցույց տան Ձեզ իրենց ստացած հաղորդագրությունները:
- ✓ Սովորեցրեք երեխաներին պահպանել ինտերնետային էթիկայի կանոնները:
- ✓ Սովորեցրեք չպատասխանել վիրավորանքների և վտանգավոր հաղորդագրությունների:
- ✓ Համակարգչի վրա տեղադրեք հատուկ ծրագրեր, որը թույլ են տալիս սահմանափակել երեխաների հասանելիությունը դեպի անցանկանելի ռեսուրսներ:

Աշտարակի թիվ2 հ/դ

Ինֆորմատիկայի ուսուցչուհի Նարինե Մեսրոպյան